1881 Թ. ՄԱՐՏԻՄԵԿՅԱՆ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՑԱՐԻԶՄԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՄՈՒՐԱԴՅԱՆ Դ. Ա.

1881 թ. մարտի 1-ին հեղափոխական նարոդովոլցիների կողմից Ալեքսանդր II-ի սպանությունից հետո գահը ժառանգած Ալեքսանդր III-ը երիտասարդական տարիների իր դաստիարակ սինոդի՝ օբեր դատախազ ծայրահեղ հետադիմական Գ. Պոբեդոնոսցևի խորհրդով կասեցրեց երկրում ծայր առնող պետական-բարենորոգչական ուղղությամբ զարգացող գործընթացը: Նոր կայսրը ոչ միայն սաստկացրեց հեղափոխական կազմակերպությունների, ազատական հայացքներ դավանող գործիչների ու մտավորականների հալածանքները, այլև Ռուսաստանում բնակվող ոչ ռուս ժողովուրդների, այդ թվում՝ հայության նկատմամբ խիստ բացասական ուղեգիծ որդեգրեց:

Հայության նկատմամբ ցարական կառավարության անբարյացակամ վերաբերմունքը մի քանի ուղղությամբ էր արտահայտվում: Նախ որոշվեց Անդրկովկասում ռուսական առևտրական բուրժուազիայի գործունեությունը խթանելու համար հնարավորինս նեղացնել հայերի տնտեսական գործունեության դաշտը, և երկրորդ՝ մոտ ապագայում սահմանափակել հայոց եկեղեցու և ազգային-կրթական հաստատությունների գործունեությունը:

Խստացումները զուգահեռաբար ուղեկցվում էին ծայրամասերի վարչական կառուցվածքի փոփոխություններով: Այսպես, Կովկասում փոխարքայության համակարգը 1882 թ. վերափոխվեց կառավարչապետության: Նախկին փոխարքա՝ Ալեքսանդր II-ի եղբայր մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչ Ռոմանովին, որը համեմատաբար ազատական հայացքներ ունեցող անձնավորություն էր համարվում, փոխարինեց իշխան Ա. Դոնդուկով-Կորսակովը: Նրան հաջորդեց գեներալ Ս. Շերեմետևը: Վերոհիշյալ անձնավորությունների կառավարչապետության տարիներին կովկասահայության նկատմամբ ծայր առավ մայրաքաղաքից ղեկավարվող անվստահության և կասկածամտության գործելաձև:

Ընդհանրապես Կովկասը Ռուսաստանի կողմից նվաճվելուց հետո, հազվագյուտ բացառությամբ, ռուսական արքունիքի սևեռուն նպատակն է եղել աստիճանաբար դիմահեղման ենթարկել տեղական ժողովուրդներին և ռուսացնել նրանց: Անդրկովկասում իշխանությունների կողմից այդ նպատակին հասնելու ճանապարհին գլխավոր խոչընդոտը համարվել է հայերի ազգային բարձր ինքնագիտակցությունը:

Կառավարությունն ավելի կարծր դիրքորոշման անցավ հայ ժողովրդի՝ թուրքական տիրապետության դեմ ուղղված ազգային-ազատագրական պայքարի հարցում: Հայտնի էր, որ տակավին 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին, որին ակտիվորեն մասնակցում էին հայության լայն շրջանակները, Արևմտյան Հայաստանի գրավման հարցը Ռուսաստանի արտաքին քաղաքա-

կանության օրակարգում էր: Թուրքական լուծը թոթափելու խնդիրը ևս արժանանում էր Ալեքսանդր II-ի և նրա շրջապատի ջերմ համակրությանը: Սակայն 1878 թ. Բեռլինի վեհաժողովը, որտեղ ռուսական դիվանագիտությունը պարտություն կրեց և, մանավանդ Բուլղարիայի «անշնորհակալ» քաղաքականության պատճառով, որը ռուսական զորքերի կողմից ազատագրվելուց հետո հրաժարվեց իր արտաքին քաղաքականության հարցերը համաձայնեցնել Ռուսաստանի հետ, «Մահմեդականների լծից քրիստոնյա ժողովուրդներին ազատագրելու»՝ Ռուսաստանում տարածված նշանաբանը տեղապտույտ տվեց: Աստիճանաբար ռուսական կառավարությունն իր արտաքին քաղաքականության մարզում սկսեց այլ ուղիներ որոնել: Ռուսաստանյան նշանավոր սոցիալ-դեմոկրատ Յու.Մարտովը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո երկրում ստեղծված դրության մասին շատ հետաքրքիր դիտարկում ունի՝ գրելով հետևյալը. «Սլավոնաֆիլությունը անկում ապրելով վերածվել էր ռուսական ազգայնականության, նոր՝ առավել գործնական մի շարժման, որն ուղղված էր ոչ թե հարևան պետությունների, այլ կայսրության ոչ ռուս ազգությունների դեմ»[1]:

«Նոր Բուլղարիա» չունենալու մտահոգությունը վերաբերում էր նաև Արևմտյան Հայաստանին և ընդհանրապես հայությանը: Մինչդեռ հայությունն Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու գործը կենսական խնդիր էր համարում, Ռուսաստանն այդ հարցում աստիճանաբար և հետևողականորեն բացասական ուղեգիծ էր որդեգրում, մի դիրքորոշում, որը շարունակվեց շուրջ երեք տասնամյակ: Աստիճանաբար Պետերբուրգի վարիչները գալիս են այն համոզման, որ առկա և հասունացող հայ-թուրքական կոնֆլիկտի մեջ Ռուսաստանին ձեռնտու է լինելու Թուրքիայի տարածքային ամբողջականության պահպանումը և ոչ թե հայկական ինքնավար կամ անկախ պետություն ունենալը: Հետապնդելով Թուրքիայի ամբողջականության պահպանման խնդիրը՝ ռուսական արքունիքը վերջինիս նկատմամբ ոչ հեռավոր ապագայում սեփական հավակնություններ էր դրսևորելու: 1881 թ. մարտիմեկյան ահաբեկումից կարճ ժամանակ անց, ինչպես ասվեց, հայ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի պետական այրերի վերաբերմունքը թե՛ ներքին և թե՛ արտաքին խնդիրներում շատ հեռու էր բարեկամական լինելուց, որի նախանշաններն ավելի վաղ էին դրսևորվել: Դեռևս Անդրկովկասում կապիտալիստական հարաբերությունների զարգացման նախնական փուլում ուրվագծվում էր ցարական կառավարության խտրական վերաբերմունքը կովկասահայերի տնտեսական գործունեության նկատմամբ: 1870-ական թվականների վերջերից ռուսական առևտրական և, մասամբ, արդյունաբերական կապիտալը, թափանցելով Կովկաս ու օգտվելով պետական հովանավորությունից, ճնշում էր տեղական արդյունագործությամբ զբաղվող ձեռնարկատերերին և միջնորդ առևտրի հետ կապված հայ վաճառականական դասին: Այդ քաղաքականությունը բացասաբար էր ընդունվում կովկասա-

[1] **Мартов Ю.,** *Общественные и умственные течения в России 1870-1905 гг., М.- Л., 1924, с. 54-55.*

հայության շրջաններում, որոնց ընդդիմադիր տրամադրությունները մարմնավորում և արտահայտում էին երկրամասի՝ չափավոր տնտեսական զարգացման ջատագով ու շեշտված ազգային մտածողություն ունեցող մտավորականները: Ուստի և զարմանալի չէ, որ տակավին 1880-ական թվականներին, երբ դեռ չէր բացահայտվել թուրքական կառավարության ցեղասպան վարքագիծը, հայ ժողովրդի երկու հատվածների կյանքի զարգացման ընթացքը միասնական տեսնելու ցանկությունը հայ հասարակական որոշ գործիչների հավատ էր ներշնչում ապագայի նկատմամբ: Այդ կապակցությամբ, հատկապես նկատի ունենալով ազգային-պահպանողականներին, ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը գրել է. «Մասնավորապես վտանգված համարելով ազգի և եկեղեցու գոյությունը Ռուսաստանում՝ նրանք ընդդիմակայում էին ցարիզմին ու նրա քաղաքականությանը, որոնելով ազգի անցյալի ու ներկայի հաստարանը Ռուսաստանից դուրս՝ Թուրքիայում»[2]: Ազգային-պահպանողականները, լինելով բարձր կարգի մտավորականներ, միայն առևտրով և արդյունագործությամբ զբաղվող խավերի ներկայացուցիչներ չէին: Հասարակական խնդիրներին նրանց մերձեցումը ավելի լայն ընդգրկում ուներ: Ազգային-պահպանողականների նշանավոր ներկայացուցիչներն էին Կարապետ Եզյանը, Գևորգ Եվանգուլյանը, Աբգար Հովհաննիսյանը, Փիլիպոս Վարդանյանը, Կոստանդին Կամսարականը, Մարկոս Աղաբեկյանը և ուրիշներ: Վերջիններս իրենց կայուն կարծիքներն ունեին հայկական եկեղեցու, ազատագրական շարժումների ու հայ իրականության ազատական զարգացման մասին և, անշուշտ, անկեղծ հոգածություն էին ցուցաբերում կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով ունեզրկվող գյուղական բնակչության նկատմամբ:

Ցարիզմի կողմից հայ ժողովրդի նկատմամբ սկիզբ առնող քաղաքական անբարյացակամ վերաբերմունքի տարիները զուգադիպեցին երկրամասում աստիճանաբար աշխուժացող կապիտալիստական հարաբերությունների ժամանակաշրջանին: Կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումն Անդրկովկաս, այդ թվում՝ Արևելյան Հայաստան, քաղաքային ու մանավանդ գյուղական չունևոր զանգվածների քայքայումը և հայրենի բնակավայրերից նրանց արտահոսքը տագնապ առաջացրեցին հայ մտավորականության որոշ շերտերում, և արտագնացները, ազգային-պահպանողական գործիչների հորդորանքներին ականջալուր, սկսեցին խորհել նաև Արևմտյան Հայաստանի արգավանդ վայրերը գաղթելու մասին:

Անշուշտ, հայ ազգային-պահպանողականների պարագլուխը Կ. Եզյանն էր, որը, բարձրաստիճան պետական պաշտոնյա լինելով հանդերձ, Ռուսաստանի ստանձնած ազատագրական առաքելության նկատմամբ ուներ յուրահատուկ կարծիք: Կ. Եզյանը և նրա շուրջ համախմբված ազգային-պահպանողականները, կանխազգալով ցարիզմի կողմից ուղղորդվող հալածանքների քաղաքականությունը, գտնում էին, որ հայոց ազգահավաքման կենտրոն կարող է լինել նաև Արևմտյան Հայաստանը:

---

[2] **Հովհաննիսյան Աշ.**, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք II, Ե., 1957, էջ 33:

1880-ական թվականներին կապիտալիստական հարաբերությունները գյուղ ներթափանցելու հետ սկսվում է գյուղական բնակչության տնտեսական քայքայման գործընթացը: Այս պայմաններում ազգային-պահպանողականների քարոզչությունը՝ երկրորդ հայրենիք ունենալու վերաբերյալ և մանավանդ Արաքսից անդին Ալաշկերտի և Մշո բարեբեր դաշտերի մասին լուրերը, հողազրկությամբ տառապող գյուղացուն շատ էին հետաքրքրում: Եվ ոչ միայն ազգային-պահպանողականները, այլև ազգային-դեմոկրատ Ռաֆֆին հայ ժողովրդի մեծ հայրենիքը համարում էր Արևմտյան Հայաստանը: Չհրաժարվելով Արևելյան Հայաստանից՝ Ռաֆֆին գտնում էր, որ Թուրքիայում ավելի հեշտ կլինի կայուն հայրենիք ունենալ, քան ցարական բռնակալական հզոր երկրում: Անշուշտ, հայ գործիչները Թուրքիան դրախտային երկիր չէին համարում: Նրանք գիտեին թուրքական բռնապետության դեմ ելած ժողովրդական ազատագրական-ինքնապաշտպանական կռիվների մասին, չէին անտեսում նաև կառավարական բռնարարքները: Սակայն վերջիններս դիտվում էին պատահական երևույթներ և հայության գոյության համար դեռևս սպառնալիք չէին համարվում: Ազգային-պահպանողականներն ունեին համախոհների մի ստվար բազմություն թե՛ քաղաքներում՝ հանձինս միջին խավերի, թե՛ գավառներում: Գյուղական ուսուցիչների, ընթերցասեր բնակչության, գյուղական քահանաների շարքերում շատ էին նրանց համակիրները:

Ազգային-պահպանողականները XIX դ. 60-80-ական թվականներին հայ հասարակական-քաղաքական կյանքում նշանակալից հետք են թողել: Չնայած Ռուսաստանում 1880-ական թվականների առաջին տարիներին կառավարության կողմից աստիճանաբար իրականացվող քաղաքական հալածանքներին՝ արևելահայ իրականության մեջ ընդդիմադիր տրամադրությունները, մասնավորապես երիտասարդության շրջանում, նահանջ չապրեցին:

1881-1882 թթ. Մոսկվայում հայ ուսանողները կազմակերպեցին «Հայրենասերների միություն» անունով մի գաղտնի կազմակերպություն, որը հրատարակեց «Ազատություն ավետաբեր» խմորատիպ թերթը: Այն սոցիալական և ազատագրական պայքարի հարցերին էր նվիրված: Նույն թվականներին Երևանում գործում էր «Հայասեր-ազգասեր» անունով մտավորականների և երիտասարդների մի կազմակերպություն, որը արևելահայությանը վերաբերող կենսական հարցերին զուգահեռ, արևմտահայության ազատագրությանը վերա-բերող խնդիրներով էր մտահոգված: Այդ տարիներին Թիֆլիսում գործում էր Գ. Արծրունու խմբակը, որին մասնակցում էին ժամանակին աչքի ընկնող և ընդդիմադիր տրամադրություններ ունեցող մի խումբ հայ մտավորականներ: Սակայն ցարական ռեակցիան իր հալածական ձեռքն ուղղեց դեպի ժամանակի կուռքը համարվող և արևմտահայության ազատագրության ջատագովներ Գ. Արծրունին և Ռաֆֆին: 1884 թ. խուզարկվում են Գ. Արծրունու և Ռաֆֆու բնակարանները, ժամանակավորապես դադարեցվում է «Մշակի» հրատարակությունը: Չնայած կովկասյան իշխանություններն արևելահայության կողմից արևմըտահայության հարցի արծարծումը փորձում էին կանխել, սակայն հաջողություն

չունեցան: «Այստեղի հայության համար,- գրել է Լեոն,- թուրքահայերի հարցերը դարձել էր սեփական հարց, ամենաբարձր նվիրական ստացվածք, որը հետ էր մղել բոլոր մյուս հարցերը, լայն ժողովրդականություն էր ստացել բոլոր խավերի կողմից»[3]:

Այսպիսին էր արևելահայության հասարակական-քաղաքական կացությունը 1881 թ. մարտիմեկյան ահաբեկումից հետո, որը կարելի է բնութագրել որպես արևմտահայության հարցի գերակայության շրջափուլ:

ПЕРВОМАРТСКАЯ ТЕРРОРИСТИЧЕСКАЯ АКЦИЯ 1881 Г. И НОВАЯ ПОЛИТИКА ЦАРИЗМА В ОТНОШЕНИИ АРМЯН

МУРАДЯН Д. А.

Резюме

В 1880-х годах царская Россия занимала враждебную позицию в отношении национального самоопределения армян в Западной Армении, что было направлено против армянского освободительного движения. Противясь этой политике, защищающей территориальную целостность Турции, армянские национальные консерваторы (К. Езян, Г. Евангулян, Абг. Иоаннисян и др.) считали, что центром консолидации армян может быть Западная Армения.

Национал – демократ Раффи также полагал, что на территории Турции намного легче будеть иметь устойчивую Родину, нежели в могущественной деспотичной России. В 1881-1882 гг. в условиях разнузданной политики Александра III среди армянства распространились идеи национально-освободительной борьбы („Союз патриотов” – тайная студенческая организация в Москве, „Армянофильская патриотическая организация” в Ереване).

Царская реакция начала гонения на поборников национально-освободительного движения Г. Арцруни и Раффи.

[3] Լեո, Անցյալից, Ե., 1925, էջ 41: